ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 114-Ա

<<26>> սեպտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստան| Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակայի| սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ի| մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-ր| մասերի դրույթներով, հիմք ընդունելով <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափա| պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ| Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 8 /ութ/ միավոր տրանսպորտային միջոցներ| շուկայական արժեքների գնահատման 2024 թվականի մարտի 22-ի հաշվետվությունը, հաշվ| առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան| կողմից 2024 թվականի օգոստոսի 16-ին անցկացված Հայաստանի Հանրապետության Շիրակ| մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջներից T-17(մակնիշի 2976 LS պետհամարանիշի 1988 թվականի արտադրության տրակտորի և ZIL MM: մակնիշի 861 LL 70 պետհամարանիշի 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոց| աճուրդին մասնակցելու համար հայտեր չեն ներկայացվել.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագնու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող և շահագործման ոչ պիտանի տրանսպորտային միջները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> N 62-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի աղյուսակի 4-րդ կետի 8-րդ սյունակի վանդակում նշված <<800000>> թիվը փոխարինել <<640 000>> թվով:

2) որոշման հավելվածի աղյուսակի 8-րդ կետի 8-րդ սյունակի վանդակում նշված <<1000000>> թիվը փոխարինել <<800 000>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	դեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____	_____
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	_____	_____	_____
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԵՆՈՔՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	_____	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<26>> սեպտեմբերի 2024 թ.

քաղաք Մարալիկ